ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ

12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԹԵՍՏ 1

Մարզ /տարածաշրջան .....

Դպրոց .....Դասարան .....

Աշակերտ /ուհի / .....
/ազգանուն, անուն, հայրանուն/

ԵՐԵՎԱՆ 2018

1 Ո՞ր նախադասությունը արևմտահայերենով ***չէ:***

1) Կը բավեր, որ իր ճարտարության փորձը տար ամենեն անմատչելի կարծված տուները կողոպտելով:
2) Երեսուն տարի վերջը այս մարդը կը հասկնար, որ այս անզգա տոպրակը իր տերը եղած էր միշտ:
3) Էն անգին մարգարտի ու ջավահրե ամարաքներում մեծացած Կրեսոսը իրանից բախտավոր աշխարհքի երեսին մարդ չէր համարում:
4) Այն հնազանդության մեջ, որ հայուհիներու բոլոր կյանքը կը կազմե, ո՛չ խորհելու և ո՛չ զգալու տեղ մնացած է:

2 Ո՞ր բառի հոգնակին է կազմվում ***ներ***-ով:

1) հավատարմագիր
2) կիզակետ
3) կողմնացույց
4) գետեզր

3 Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն բառերի համարները, որոնց բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով:

1. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ, 2. ԲԱՐԵՀՈՒՍՈ ՀՐՎԱՆԴԱՆ, 3. ՏԻԳՐԱՆ ՄԵԾ, 4. ՄՈՎՍԵՍ ՄԱՐԳԱՐԵ, 5. ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ, 6. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

1) 1, 3, 5
2) 2, 4, 5
3) 1, 4, 5
4) 2, 3, 6

4 Ո՞ր տարբերակում ցուցական հոդի գործածություն կա:

1) Նեղացել եմ ընկերոջիցդ:
2) Հերոսներդ միշտ կհիշվեք:
3) Գիշերս ձյուն է եկել:
4) Թռչում է միտքս դեպի տուն:

5 Ո՞ր բառակապակցության մեջ մակբայ կա:

1) առավոտյան զեփյուռ
2) համընթաց շարժվող
3) երկարատև հարցուփորձ
4) զգույշ ոտնաձայն

6 Պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ո՞ր տարբերակում է ճիշտ փոխակերպված բարդի:

Այդ կինը և ճոճվելով քայլող այդ տղամարդը ինձ դուր չեկան:

1) Այդ կինը և այդ քայլող տղամարդը, որ ճոճվում էր, ինձ դուր չեկան:
2) Այդ կինը և այդ տղամարդը, որը ճոճվելով էր քայլում, ինձ դուր չեկան:
3) Այդ կինը և այդ տղամարդը, որը քայլելիս ճոճվում էր, ինձ դուր չեկան:
4) Այդ կինը և այդ տղամարդը, որոնք ճոճվելով քայլում էին, ինձ դուր չեկան:

7 Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

- Մենք այդ ամենը կարող ենք կատարել,- պատասխանեց վարպետը:

1) Վարպետը պատասխանեց, որ ինքը այդ ամենը կարող է կատարել:
2) Վարպետը պատասխանեց, որ իրենք ամենը կարող են կատարել:
3) Վարպետը պատասխանեց, որ իրենք այդ ամենը կարող են կատարել:
4) Վարպետը պատասխանեց, որ նա այդ ամենը կարող է կատարել:

8 Հետևյալ բայը դերբայական ո՞ր ձևով է դրված:

հանգցրած

1) անորոշ
2) հարակատար
3) ենթակայական
4) համակատար

9 Բառի տրված բաղադրիչներից ո՞րն է երկրորդական բառակազմական ձևույթ:

դժգոհություններից

1) դժ
2) գոհ
3) ներ
4) ից

10 Ո՞ր նախադասությունն է սխալ կետադրված:

1) Գագիկ Արծունին մի քանի շաբաթ շարունակ հյուրընկալեց Աբաս թագավորին, և ի պատիվ նրա՝ այդ ընթացքում կազմակերպվեցին հաճելի զբոսանքներ:
2) Բերդի շրջակայքում շրջելիս՝ թագավորը իր հյուրերին ցույց էր տալիս գեղազվարթ տեսարանները, որոնցով հիանալու համար վերջիններս բազմում էին քարաբլրին:
3) Գեղատեսիլ բարձունքից երևում էին գեղածուփ կոհակներով և ապառաժոտ կղզիներով ծովակը, քաղաքը՝ իր գմբեթարդ շինություններով:
4) Երիտասարդը, մտնելով հյուրանոց, հանկարծ կանգ առավ՝ անակնկալ հանդիպումից ցնցված:

11 Ո՞ր միավորը ***չի*** կարող դրվել բացառական հոլովով:

1) հանգման անուղղակի խնդիրը
2) տեղի պարագան
3) անջատման անուղղակի խնդիրը
4) ներգործող անուղղակի խնդիրը

12 Հետևյալ նախադասության մեջ տրվածներից ո՞րը ***չկա*** (նախադասությունը կետադրված չէ):

Թվում է գետը մի չնաշխարհիկ կապույտ գոտի է որ զառիթափի վրայով պտույտ-պտույտ գալարվելով իջնում է ներքև դեպի երկարաձիգ կիրճը:

1) տրոհվող դերբայական դարձված
2) զեղչված շաղկապ
3) զեղչված ստորոգյալ
4) պարագայական բացահայտիչ

13 Ո՞ր միտքն է բխում տեքստի բովանդակությունից:

Իտալական Պիզա քաղաքը հռչակված է աշխարհում իր յուրօրինակությամբ բացառիկ կառույցով՝ թեք աշտարակով: Արդեն ավելի քան 100 տարի կանխատեսում են նրա շուտափույթ անկումը: «Կընկնի՞, թե՞ չի ընկնի»,- վիճում են գիտնականները: Աշտարակի բարձրությունը նախատեսվել է 100 մետր, ինչը մեծ խիզախություն էր այն ժամանակների համար: Սակայն շինարարները հաշվի չէին առել հիմքի տակ գտնվող հողի ավազակավային բնույթը: Հիմքի առաջին քարը դրվել է 1173 թվին: Արդեն առաջին երեք հարկերը բարձրացնելիս աշտարակը թեքվել է դեպի հարավ, և աշխատանքները դադարեցվել են ... 100 տարով: 1275 թ. Ջովանի դի Սիմոնեն շարունակեց շինարարությունը: Նա որոշեց կառուցել հենց թեք աշտարակ, որը չպետք է փլվի: Նա կառուցեց ևս 3 հարկ: Սակայն շինարարությունը կրկին դադարեցվեց: 1350 թվին մեկ այլ ճարտարապետ ավելացրեց ևս 2 հարկ: 8-րդ հարկը նա կանգնեցրեց՝ պատերը փոքր-ինչ տեղաշարժելով դեպի հյուսիս՝ այդ կերպ հավասարակշռելով թեքվածքը:

1) Դարեր շարունակ դիտվել է, որ աշտարակը պարբերաբար ինքն իրեն շրջվում է մեկ դեպի հարավ, մեկ՝ դեպի հյուսիս:
2) Աշտարակի թեքվածությունը գիտնականները կապում են հիմքի անհամաչափ կառուցման հետ, ինչը, սակայն, հայտնի դարձավ այն բանից հետո, երբ նրա 3-րդ հարկը մյուս 2-ի համեմատ սկսեց թեքվել:
3) Աշտարակի 8 հարկերը կառուցվել են տևական ընդմիջումներով, և 1-ին ու 8-րդ հարկերի կառուցման միջև ընկած է շուրջ երկդարյա ժամանակաշրջան:
4) Սիմոնեն շինարարությունը վերսկսելիս մտադիր էր հաջորդ 3 հարկերը կառուցել նախորդների թեքվածությանը հակառակ ուղղությամբ՝ աշտարակի հավասարակշռությունը պահպանելու համար:

14 Նախադասությունների քերականական և տրամաբանական հաջորդականության ո՞ր տարբերակն է ճիշտ:

1. Նույնքան անշուք դռներ ու ցուցանակներ, անշուք պատուհաններ, իսկ շուրջը խաղողի այգիներ էին:
2. Փոքր, շատ փոքր քաղաք էր, ընդամենը մի քանի անշուք փողոցներ՝ միհարկանի կամ երկհարկանի փայտյա անշուք տների շարքով:
3. Մենք շրջեցինք շրջակա այգիներում, հետո վերադարձանք գլխավոր փողոց ու վերջապես ճաշարան գտանք, բայց փակ էր:
4. Երբ տեղ հասանք, քաղաքը դեռ չէր արթնացել. մենք իջանք մեքենայից ու քայլեցինք գլխավոր փողոցով:

1) 3, 4, 1, 2
2) 3, 4, 2, 1
3) 4, 2, 1, 3
4) 4, 2, 3, 1

15 Ո՞ր տարբերակն է քերականորեն և տրամաբանորեն համապատասխանում տրված նախադասության բաց թողած հատվածին:

Եվ այն է, ..., մեկ էլ հանկարծ մի արտահայտություն գրավեց ուշադրությունը:

1) ուզում էր վայր դնել լրագիրը
2) չուզեց զբաղվել դրանով
3) մանավանդ որ հոդվածը գրված էր
4) ստուգեց՝ թեթև նայելով տեղ-տեղ

Առաջադրանքներ 16-19

Տրված վանդակներում գրել համապատասխան հոլովումների ենթարկվող բառերի համարները.

1. ամանոր, 2. գործընկեր, 3. հանդիպում, 4. աղախին, 5. տարի, 6. սկեսրայր, 7. լռություն:

16 **ոջ** արտաքին ☐

17 **ան** արտաքին ☐

18 **վա** արտաքին ☐

19 **ա** ներքին ☐

Առաջադրանքներ 20-22

Գրել համապատասխան ժամանակաձևերով դրված բայերի համարները տրված վանդակներում:

Երեկոները տղաներից մեկը 1 ցույց է տալիս ձորի ճեղքված քարը ու պատմում բրուտի տղայի հերոսական կյանքն ու մահը: Էլ ի՞նչ: 2 Վա՞յր դնեմ գրիչս: Բայց ինչո՞ւ 3 սկսեցին դողալ մատներս այս ծով ուրախությունից: Որ ես ժամանակի խոր ծալքերից իմ թույլ գրիչով 4 վե՞ր հանեցի իմ մանկության ընկեր Անդոյի հերոսական դեմքը, թե՞ 5 վստահ լինելով, որ դեռ մի անգամ ես համայն աշխարհում մեր թնդանոթները հզորագույն 6 կշառաչեն:

20	ենթադրական ապառնի	
21	անկատար ներկա	
22	ըղձական ապառնի	

23 Բաց թողած բառերի համարները վանդակներում դասավորել դրանց՝ նախադասության մեջ տեղադրման ճիշտ կարգին համապատասխան (բառերը տրված են ուղիղ ձևով):

Մենք, …… մեջ թաքնված, հետևում էինք հավալուսների որսին, և շուտով նկատեցինք, որ բռնած բոլոր …… չեն ուտում. մի մասը տեղավորում են ……կախված պարկերում:

(1. կտուց, 2. եղեգ, 3. ձուկ)